

– Կ'երեւակայեմ. ուստի երթամ ես ներս եւ հիմա կ'ուզամ:

Խեղճ երիտասարդը մտաւ ներս եւ նոյն դիրքին մէջ, նոյն բազմոցին վրայ գտաւ իւր Տիկինը՝ եւ նոյն կրթով դառնացեալ. դարձեալ աղախիններուն մէկ մասը առջեւը կեցած՝ ձեռածալ, միւս մասը գնացեր կին զանազան ծառայութիւնք կատարել: Երբ տեսաւ իր ամուսինը, առջի հարցմունքն եղաւ.

– Ի՞նչ բանի համար այդ աւագակները ետ դարձուցեր են իրենց դրկուած կերակուրները:

– Պատճառը չեմ գիտեր, Տիկին. միայն այս չափը գիտեմ թէ մենք այդ աւագակներուն ձեռքն ենք, եւ ի՞նչ չարիք որ ուզեն կրնան մեր գլուխը բերել:

– Ի՞նչ զարմանք, երբ այստեղ վեց-յոթը հոգի զինեալ մարդ ունինք, եւ սա անարգ աղախիններուն չափ արժէք չունին եւ աւելի անախտան են: Բերդ մը տասը հոգուոյ դէմ չի կրցաք պաշտպանել, դռները կոտորեցին ներս մտան, շան պէս դողացիք եւ դիմադրութիւն մը չի կրցաք ընել. եւս եմ յանցաւորը, որ ձեզի պէս թշուառականներու հաց կը կերցնեմ:

– Տիկին, հիմա յանդիմանութեանց ժամանակ չէ, վասնզի այդ մարդիկը եթէ քիչ մը ուշանանք ներս կը խուժեն եւ քու հանգստութիւնդ կ'աւրեն. հիմա իրենք կը խնդրեն, որ իրենց մէջեն խելօք մէկը ուղարկեն վասնզի առաջարկութիւն մը ունինք հանրմին կ'ըսեն:

– Ինձի՛ մարդ պիտի ուղարկեն այդ անհաւատները, աստուած չընէ, որ ես ընդունիմ այդպիսի առաջարկութիւն, այս բազմոցիս վրայ մեռնիլ աւելի յանձն կառնում քան թէ այդ շուններուն երեսը տեսնել:

– Բայց ի՞նչ օգուտ այսչափ խստութենէ, մենք կարելի է որ լաւ չի պաշտպանեցինք բերդը, բայց անգամ մը տեսնելու է թէ ի՞նչ մարդ է իրենց հսկայ գլուխը, քսան-քառասուն մայրդ կարծէ: